ստանալ քայլ մի մինչ ոչ լինիցի տուեալ նմայ 'ի տանէն հայոց թուխտաւ գնեցելոք երկրի ըստ չափաւորութեան, լայնութեան և երկայնութեան և այլն։

ԳԼՈՒԽ Ը.

Ամենայն բնութիւն մարդոյ 'ի ազգէ և 'ի ժողովրդենէ հայոց մկրտելոց և հաւատացելոց 'ի Քրիստոս, կարող է գնել երկիր վասն ժառանգութեան իւրոյ և վաճառել երկիր իւր ունեք առն 'ի նոյն ազգէ և դաւանութեամբ, այսմ մտածութեամբ զի ամենայն զոր ինչ 'ի բերմանէ երկրին գոյանայ հատուցանել հարկ, մաքս և հաս բաժին և այլն, առ 'ի տունն հայոց Օրինօք Հայոց։

ԳԼՈՒԽ Թ.

Ամենայն բնութիւն մարդոյ ծնեալ 'ի յերեսս երկրին Հայոց անօրէն, և եթէ ծնեալ 'ի տարբ աշխարհ պանդխտացեալ 'ի հայս, կարող է վարձու ստանալ երկիր և տուն և բնակութիւն ժամանակաւոր, ոչ խոստանասցի նմայ գնել և ոչ ժառանգութիւն և ոչ արժանի վաճառելն նորայ, բայց ունենալով նմայ երկիր և տուն վարձու՝ հատուցանելով վարձն բնակութեան տան իւրոյ առ տեառն տան, և հարկ և մաքս և հաս և այլն առ տանն Հայոց։